

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 023722/05

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 14.06.2021 թվականի թիվ \_\_\_\_\_ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 23722 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր՝ Արտակ Ղազարյանը (ՀՎՀՀ՝ 25429866, հասցե՝ ՀՀ ք. Երևան, Նոր Նորք 8 գանգված 16 7) ՀՀ Հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի մասին տեղեկությունները, որի համար նախատեսվում է պատասխանատվություն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>6</sup> հոդվածի 1-ին մասով:

Պատշաճ ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, ակտի հասցեատերը չի ներկայացել: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ Արտակ Ղազարյանը 2020 թվականի ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի մասին տեղեկությունները ներկայացրել է 02.06.2021 թվականին:

Արարքը նախատեսված է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>6</sup> հոդվածի 1-ին մասով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆիզիկական անձանց եկամուտների և եկամտային հարկի մասին տեղեկություններից վճարման ենթակա հարկի գումար չի առաջանում, ինչպես նաև վերոնշված տեղեկությունները 14.06.2021 թվականի դրությամբ արդեն իսկ ներկայացված են, ուստի վերջինիս կողմից թույլ տրված իրավախախտումը ունի նվազ նշանակություն:


Ղեկավարվելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21 հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244<sup>2</sup> հոդվածով, 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21 հոդվածի՝ Արտակ Ղազարյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Արտակ Ղազարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ



Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝

վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40):

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու /հանձնված համարվելու/ օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ

(ստորագրություն)

Ստացա որոշման պատճենը \_\_\_\_\_